ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կազմվել է՝

«Սոուլ Մի» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00506953, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Տիգրան Մեծի փ□ շ 13, բն 21, այսուհետ **Ընկերություն**)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Պավել Խաչատրյանի, և

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի Նախարարության (այսուհետ՝ **ԿԳՄՍ**), ի դեմս ԿԳՄՍ փոխնախարար՝ պարոն Կարեն Գիլոյանի, հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, մյուս կողմից,

միջև, այսուհետ՝ անհատապես «Կողմ», կամ հավաքականորեն՝ «Կողմեր»:

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Սույն համագործակցության հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) նպատակն է Կողմերի միջև սահմանել աշխատանքային հատուկ պայմանավորվածություններ և ստեղծել համագործակցության շրջանակ, ինչպես նաև ստեղծել հաղորդակցման ուղի՝ ընդհանուր հետաքրքրության հարցերում արդյունավետ համագործակցելու նպատակով, մասնավորապես, այն գործունեության ոլորտում, որը սահմանված է սույն Հուշագրում՝ հիմնված ընդհանուր շահի, փոխադարձության և փոխլրացման սկզբունքների վրա:

1.2. Կողմերի միջև համագործակցությունը՝ համաձայն տրամադրված լիազորությունների ներառում է, սակայն չի սահմանափակվում, հետևյալ ոլորտներով՝

- Սպորտում թվային տեխնոլոգիաների կիրառության տարածման նպաստում
- Սպորտային միջոցառումների կազմակերպման աջակցություն
- Տարբեր բնագավառներում համատեղ ծրագրերի մշակում, նպատակ ունենալով զարգացնել սպորտը՝ թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով
- Սպորտային միջոցառումների ժամանակ թվային տեխնոլոգիաների լուծումների կիրառման շուրջ համագործակցություն
- Թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով դեռահասների և պատանիների շրջանում սպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացման և սպորտի մասսայականացման համար համատեղ ծրագրերի մշակում
- Ծանոթություններ և շփումներ մարզիկների, սպորտի բնագավառում ներդրում ունեցող անձանց, ինչպես նաև սպորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ
- Ցանկացած այլ ոլորտ կամ գործունեություն, սույն Հուշագրով նախատեսված շրջանակներում, որը համահունչ է և անհրաժեշտ է Կողմերի փոխշահավետության համար:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ

2.1. Այս Հուշագիրը հետաքրքրությունների հայտարարություն է և չի ստեղծում որևէ կիրառելի իրավունքներ կամ

պարտավորություններ: Կողմերը սույն Հուշագրի շրջանակներում իրենց առջև դրված նպատակները կիրականացնեն առավելագույն ջանքերի գործադրմամբ:

2.2. Սույն Հուշագիրը չի փոփոխում կամ կասեցնում որևէ ազգային օրենսդրություն և չի ազդում Կողմերի նկատմամբ գործող այլ բազմակողմանի կամ երկկողմանի համաձայնագրերի դրույթների վրա:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

3.1. Սույն հուշագրի շրջանակներում համագործակցությունը, առանց սահմանափակումների, պետք է ներառի հետևյալը՝

- Թվային տեխնոլոգիաների ներդրում մարզական հանդիպումների ժամանակ
- Մարզական միջոցառումների ժամանակ թվային տեխնոլոգիաների կիրառում, մասնավորապես մրցաշարային աղյուսակների կազմում ընկերության արտադրանքների միջոցով
- Մարզական միջոցառումների կազմակերպման նպատակով համագործակցություն
- Սպորտի հանրայնացման նպատակով համատեղ արշավների կազմակերպում
- Կողմերի լոգոների օգտագործում պաշտոնական միջոցառումների ժամանակ
- Համատեղ նպատակների իրագործման համար մեդիա ռեսուրսների օգտագործում
- Մարզիկների անձնական բրենդի զագացման ուղղված արշավների կազմակերպում
- ԿԳՄՍ-ի կողմից աջակցություն Ընկերության կողմից սույն Հուշագրից բխող գործառույթների իրագործմանը

- Մասնակցություն սպորտին առնչվող միջոցառումներին, ինչպես նաև ոչ սպորտային փառատոններին՝ նվիրված երիտասարդությանը, խաղաղությանը, հաշմանդամությանը, առողջությանը, սոցիալական թեմաներին,
- Փոխադարձ կապի ապահովում հանդիպումների, համաժողովների միջոցով
- Ցանկացած այլ համագործակցության ձևեր, որոնք նպատակահարմար եւ անհրաժեշտ կհամարեն կողմերը փոխշահավետության համար՝ սույն Հուշագրի կողմից նախատեսված շրջանակներում

4. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1. Սույն Հուշագիրը կիրականացվի Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ և պարբերական խորհրդատվությամբ:

4.2. Կողմերի միջև համագործակցության հետագա ասպեկտները, աշխատանքի մեթոդների և ընթացակարգերի սահմանումները, կարող են մշակվել և համաձայնեցվել Հուշագրի շրջանակներում, ներառելով ներգրավված անձնակազմի համապատասխան անդամների պարտականությունների և պատասխանատվությունների հստակեցումը:

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Սույն Համագործակցության Հուշագիրը կարող է փոփոխվել ցանկացած պահի՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և գրավոր ձևով:

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը կսկսեն համագործակցել սույն Հուշագրի շրջանակներում՝ Կողմերի կողմից վերջինի ստորագրման պահից:

7. ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

7.1. Սույն Հուշագիրը կարող է դադարեցվել որևէ Կողմի կողմից՝ մյուս Կողմին երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելուց հետո:

Ի վկայություն դրա, Կողմերը ստորագրել են սույն Հուշագրի երկու հավասարազոր օրինակներ՝ հայերեն լեզվով: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ ԿԳՄՍ կողմից՝
Փոխնախարար՝ Կարեն Գիլոյան
Վայրը՝ ք. Երևան, ՀՀ

Ամսաթիվ՝ 07.06.23թ.

« **Սոուլ Մի** » ՍՊԸ-ի կողմից՝
Տնօրեն՝ Պավել Խաչատրյան
Վայրը՝ ք. Երևան, ՀՀ

Ամսաթիվ՝ 07.06.2023